

---

---

**ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ**

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Մ. Ռ.

Լեզվական նորաբանությունները, որ հանդես են գալիս որպես նոր առարկաների, երևույթների ու հասկացությունների բառային անվանումներ, բառապաշարում առանձին շերտ են կազմում: Ճիշտ է, լեզվի բառապաշարն անընդհատ փոփոխվում է, անմիջականորեն արտացոլում հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերը, սակայն դա չի նշանակում, թե այդ փոփոխությունները տարածվում են նաև բառակազմական օրինաչափությունների վրա, և նույն ձևով փոխվում են նաև բառակազմության ձևերն ու եղանակները:

Բառային կազմի համալրումն ու հարստացումը տեղի է ունենում լեզվում եղած բառակազմական ձևայինների՝ արմատների կամ արմատների ու ածանցների միջոցով նորանոր բառեր կազմելով: Ճիշտ է նկատել ակադեմիկոս Մ. Աբրահամյանը, որ «բառակազմական օրինաչափությունների կայունությունը բացարձակ չէ. վերջին տասնամյակներում հայերենի բառակազմության մեջ կատարվում են որոշ տեղաշարժեր, որոնք թեև լայն ընդգրկում չունեն, բայց արժանի են ուշադրության»<sup>1</sup>: Նա հայերենի բառակազմության բոլոր դրսևորումներն ամփոփում է երկու խմբի մեջ՝ ա) փոխանցումային կազմություններ և բ) կաղապարային կազմություններ: Արդի բառակազմության մեջ իշխողը կաղապարային կազմություններն են, իսկ փոխանցման երևույթը էական դեր չի խաղում<sup>2</sup>:

Նորակազմ բառի, որպես լեզվական միավորի, տարածված գործածությունը մեծ չափով պայմանավորված է նրա բառակազմական առանձնահատկություններով, տվյալ լեզվի ներքին օրինաչափություններից բխող լեզվական ավանդույթներին հավատարիմ մնալով: Անկախ բառակազմության մեջ հանդես եկող նոր երևույթներից, նորաբանությունները կազմվում են մեր լեզվի բառակազմական օրենքներով: Այսպես, բարդության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը լինում է երկու տեսակ՝ *համադասական* և *ստորադասական*: Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է մեծավաստակ հայագետ Մ. Աբեղյանը: Բարդ բառերի բաղադրիչ անդամների միջև նշելով այդ երկու կարգի հարաբերությունը՝ նա բարդության ամենատարածված տեսակը համարում է ստորադասականը<sup>3</sup>: Լեզվական նորաբանությունների այլ հատկանիշների հետ անհրաժեշտ է քննել նաև նրանց կազմության սկզբունքներն ու կառուցվածքային տիպերը: Բառի կառուցվածքի ուսումնասիրությունը, անշուշտ, անչափ կարևոր է

---

<sup>1</sup> Տե՛ս **Աբրահամյան Մ.**, Ժամանակակից հայերենի բառակազմության զարգացման միտումները (Գիտական նստաշրջանի զեկուցման թեզիսներ, Ե., 1998, էջ 3):

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 20:

բառիմաստը հստակ ըմբռնելու, լեզվի զարգացման տվյալ շրջանում նրա բառակազմական օրինաչափությունները պարզելու և բառի կառուցվածքը ճիշտ ներկայացնելու համար: Սակայն բառի կառուցվածքի սպառնիչ ուսումնասիրությունը միայն բառակազմական վերլուծությամբ հնարավոր չէ կատարել: «Բառի կառուցվածքի ուսումնասիրության ամենանպատակահարմար ուղին ձևային վերլուծության և ձևայինների գուգորդման նկարագրության մեթոդն է», - գրում է Տ. Ավետիսյանը<sup>4</sup>: Լեզվաբանի այս նկատումը ճշմարտացի է, քանի որ բխում է լեզվի իրական փաստերից: Եթե բառակազմական վերլուծության ժամանակ սահմանափակվում ենք միայն բարդության անմիջական կազմիչներով՝ բառակազմական միավորներով, ապա ձևային վերլուծության ժամանակ հաշվի ենք առնում բառի կազմում եղած բոլոր իմաստակիր միավորները:

Մամուլից քաղված լեզվական նորաբանությունները քննենք բառակազմական առումով, հետևաբար, սահմանափակվեք դրանց բառակազմական սկզբունքների ու կաղապարների վերլուծությամբ: Լեզվական նորաբանությունները, ինչպես և ամեն մի նորակազմ բառ, անշուշտ, ունենում է բաղադրյալ կազմություն: Իսկ բաղադրյալ բառերը տարբեր են թե՛ իրենց կազմության եղանակներով ու միջոցներով, թե՛ իրենց կառուցվածքով: «Բառակազմության կենտրոնական հասկացությունը,- գրում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը,- բառն է, ուսումնասիրության հիմնական առարկան՝ բաղադրյալ բառը»<sup>5</sup>: Նա ինչպես ամեն մի կաղապարի, այնպես էլ բաղադրյալ բառի կաղապարի մեջ տարբերակում է *միջուկային* և *առմիջուկային* բաղադրիչներ և բաղադրյալ բառերի տեսակները որոշում է առմիջուկային բաղադրիչների բնույթով: «Միջուկ է ծառայում որպես բառակազմական հիմք ձևավորված որևէ արմատ (արմատահիմք),- գրում է Գ. Ջահուկյանը,- իսկ որպես առմիջուկային բաղադրիչ հանդես է գալիս կամ համատիպ որևէ միավոր, կամ մի հատուկ տիպի բաղադրիչ, որ նախատեսված է հենց այդ գործառության համար և անկախորեն չի գործածվում: Երկրորդ տիպի բաղադրիչն ընդունված է կոչել ածանց, ածանցավոր բառի սերումը (ստացումը)՝ *ածանցում*:

Համատիպ բաղադրիչներով բաղադրությունը կոչվում է բարդություն կամ բարդ բառ, սրա սերումը՝ *բարդում*<sup>6</sup> (ընդգծումները մերն են - Ս. Մ.): Այսինքն՝ ժամանակակից հայերենում բառակազմության հիմնական եղանակը եղել և մնում են բարդությունն ու ածանցումը: Եվ դա, իրոք, այդպես է: Ուսումնասիրողների հավաստմամբ, բարդության տեսակարար կշիռը խիստ մեծ է ածանցման համեմատությամբ: Ըստ որում, բարդությունները մեծ թիվ են կազմում ոչ միայն եղած բառերի, այլև *նորաբանությունների մեջ*: Մամուլում ստեղծված նոր բառերի ճնշող մասը բարդություններ են՝ հեռակետ, մերձակետ, երկրաշուրջ,

<sup>4</sup> Տե՛ս Հայոց լեզվի կառուցվածքը, Ե., 1975, էջ 10-11:

<sup>5</sup> **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 158:

<sup>6</sup> Նույն տեղում:

հեռագրալուսանկար և այլն<sup>7</sup>: Մամուլից քաղված նորակազմ բառերի՝ մեր կատարած կառուցվածքային վերլուծությունը ևս հաստատում է այս տեսակետի ճշտությունը: Մա ամեննին էլ չի նշանակում, թե ածանցումը, որպես բառակազմության տեսակ, տարածված չէ հայերենում: Խոսքը սովյալ դեպքում վերաբերում է այդ երկու տեսակների հարաբերությանը:

*Լեզվական նորաբանությունների* կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ կան ժամանակակից հայերենի բառակազմության գրեթե բոլոր տիպերը՝ բարդությունը իր տարբեր ենթատեսակներով, ինչպես նաև ածանցումը՝ իր տարբեր կաղապարներով: Բարդության բառատիպերը, ըստ նրանց մեջ եղած հիմնական ձևայինների քանակի, լինում են *երկարմատ, եռարմատ և քառարմատ*: Այս տարբեր կաղապարները կան նաև լեզվական նորաբանությունների մեջ, բայց գերակշռողը երկբաղադրիչ կազմություններն են, այսինքն՝ արմատ-հոդակապ-արմատ (Ա-հ-Ա) կամ արմատ-արմատ (Ա-Ա) կաղապարը:

Խոսելով ժամանակակից հայերենի բառակազմության եղանակների մասին՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ հայերենի համար բնորոշ են երկբաղադրիչ, հազվադեպ՝ եռաբաղադրիչ բարդությունները: Նա միաժամանակ նկատում է, որ երկբաղադրիչ բարդությունների մեջ սովորաբար հիմքային արժեք ունի երկրորդ բաղադրիչը, եռաբաղադրիչ բարդությունների մեջ՝ երրորդը, այսինքն՝ որպես բարդության հիմք (լրացյալ) հանդես է գալիս վերջին բաղադրիչը<sup>8</sup>:

Լեզվական նորաբանությունները, որպես բաղադրյալ բառեր, կազմվում են տարբեր խոսքի մասերի բազմազան զուգորդություններով, բառակազմական բաղադրիչների շարահյուսական տարբեր հարաբերություններով ու խոսքիմասային տարբեր արժեքով: Բաղադրություններն ունենում են կառուցվածքային հետևյալ տիպերը. 1. *երկարմատ*, 2. *եռարմատ*, 3. *բարդ ածանցավոր*, 4. *հատվածական բաղադրություններ*, 5. *ածանցավոր կազմություններ*: Դրանք ներկայացնենք ըստ բառակազմական կաղապարների:

1. *ԵՐԿԱՐՄԱՏ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ*: Բարդությունների մեջ իշխողը *երկարմատ* են, որոնք լինում են՝ ա) *Գոյականի խոսքիմասային արժեքով բաղադրություններ*: Սրանք կազմվում են Ա-հ-Ա կամ Ա-Ա կաղապարներով, իսկ բաղադրիչները, լինում են գոյական, բայց կարող են ունենալ նաև խոսքիմասային տարբեր արժեքներ:

*Գոյական-գոյական*՝ խոսքիմասային նույնական արժեքով բարդությունները Գ. Ջահուկյանն անվանում է համագործառական կամ համակաղապարային, քանի որ բարդությունն ունի խոսքիմասային նույն արժեքը, ինչ նրա հիմքային, այսինքն՝ վերջին բաղադրիչը. ինչպես՝ ընտրակարգ, լիդերավազք, քարոզարշավ, ընտրագանգված, շահութահարկ, կրթակարգ, տեսանյութ,

<sup>7</sup> **Ավետիսյան Տ.**, Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը (Հայոց լեզվի կառուցվածքը, Ե., 1975, էջ 29):

<sup>8</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 219-220:

բուհավարտ. օրինակ՝ Մի<sup>6</sup> թե «Արդարություն» դաշինքի ցուցակից մեծամասնական ընտրակարգով գրանցված, բայց համապատասխան ձայներ չստացածների մեջ չկար այլ անձնավորություն նման նախաձեռնությամբ հանդես գալու համար (Ազգ, 30. VII. 2003): Արդյո՞ք ընդդիմությունը մայիսից անցնելու է Արտաշես Գեղամյանի մտահաղացումների իրագործմանը... Տեսա՞ք, որ «Ես ճիշտ էի» ասելու իրավունք չի վաստակել՝ դրանից բխող բոլոր հետևանքներով (իմա լիդերավագրում առաջ անցնելը) (ՀՀ, 1. V. 2004): Ինչպես հայտնի է, հինգ մասնավոր հեռուստատեսություններ համաձայնության են եկել նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում քաղաքական գովազդի և գնի վերաբերյալ (Հայոց աշխարհ, 16. I. 2003): Դա խորհրդարանում չներկայացված ընտրական գովազդների պարագան է (Ազգ, 1. VIII. 2003): Ձեռնարկությունների, միավորումների և կազմակերպությունների շահութահարկ (Հայաստան, 19. IV. 1991): Այսօր հրապարակի վրա է «Հանրապետության պետական կրթակարգի նախագիծը» (Կրթություն, 31. III. 2004):

*Բայարմատ-գոյական՝* գոյականի խոսքիմասային արժեքով. Նախաքննության շահերից ելնելով՝ այս տեսանյութերը պատկան մարմինների մոտ են (Ազգ, 31. III. 1999):

*Գոյական-բայարմատ՝* գոյականի խոսքիմասային արժեքով. *Բուհավարտները՝* դժվարությամբ են աշխատանք գտնում (Առավոտ, 24. XI. 1998):

բ) *Ածականի խոսքիմասային արժեքով երկարմատ բարդությունները ևս աչքի են ընկնում* լեզվական նորաբանությունների կառուցվածքային տիպերի մեջ: Մրանք կազմվում են խոսքիմասային տարբեր արժեք ունեցող բաղադրիչներից՝ գոյական-գոյական, գոյական-բայարմատ, գոյական-ածական, գոյական-մակբայ և այլն: Տարբեր խոսքի մասեր զուգորդվելով՝ կազմում են նոր բարդ բառ՝ ածականի խոսքիմասային արժեքով. ինչպես նորանշանակ (մակբայ-բայարմատ), օրինաստեղծ, հայակործան (գոյական-բայարմատ), տիրահաճ (գոյական-ածական): Օրինակ՝ ՀՀ նախագահի մամուլի նորանշանակ քարտուղար Կլարա Սարգսյանը չներկայացրեց ՀՀ նախագահի առաջիկա ծրագիրը (Առավոտ, 2. IX. 1998): Նրանք քննարկել են նաև Ազգային ժողովի և կառավարության օրինաստեղծ գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու մեխանիզմներ (ՀՀ, 25. III. 2004): Թող միջազգային դրամատներում մեր անկախությունը գրավ դնող *հայակործան* արտագաղթը լռելյայն օրհնող այդ մեղավոր ձեռքը համբուրեն կուսակցությունների *տիրահաճ* պարագլուխները, մեծ ու մանր իշխանավորները (Իրավունք, 5-12. V. 2004):

2. *ԵՌԱՐՄԱՏ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*: Ինչպես նշեցինք, երկարմատ բարդությունների մեջ առաջին բաղադրիչը լրացում է դառնում երկրորդի համար, իսկ բառի ամբողջական իմաստն արտահայտում է երկրորդ բաղադրիչը

\* Աստղանիշով բերված օրինակները վերցրել ենք Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանից» (Ե., 2002):

(ծաղկավաճառ, հյուրասենյակ, դասընկեր և այլն): Բայց երբ բարդ բառը կազմված է լինում երկուսից ավելի արմատներից, այդ հարաբերությունը փոխվում է: Բառակազմական այս ուշագրավ երևույթին անդրադարձել են Էդ. Ադայանն ու Հովհ. Բարսեղյանը<sup>9</sup>: Հասկանալի է, որ եռաբաղադրիչ բարդությունների դեպքում առաջին երկու բաղադրիչները դառնում են անմիջական կազմիչներ բարդ բառի համար: Օրինակ՝ *լրագրավաճառ* բառը կազմված է *լրագիր* և *վաճառ* բաղադրիչներից, որովհետև նախապես կազմվել է *լրագիրը* և ապա *լրագրավաճառը*: Դրա կաղապարը կլինի (Ա-հ-Ա)-Ա:

Լեզվական նորաբանությունների մեջ ևս եռարմատ բաղադրիչներով բարդությունները շատ չեն, բայց այդպիսի կազմությունների հանդիպում ենք ավելի շատ, քան լեզվի զարգացման նախորդ շրջաններում: Կարելի է ասել, որ ժամանակակից հայերենի բառակազմության մեջ նկատվում է եռաբաղադրիչ բարդություններ կազմելու որոշակի միտում, ինչպես՝ ջրախողովակաշար\*, ընտրատեղամաս, ժողովրդահայրենասեր\*, հեռուստալրատվամիջոց\*. Գյուղապետի կարգադրությամբ փակել են գյուղ մտնող գլխավոր *ջրախողովակաշարերը* (Իրավունք, 25-31. III. 1997): Կազմակերպությունները հարցումներ են անցկացրել *ընտրատեղամասերում*, որոնց արդյունքները զգալիորեն տարբերվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներից: (ՀՀ, 22. XI. 2003): Չեմ թաքցնում, որ *ժողովրդահայրենասերների* նորաստեղծ դաշինքը դիտվում է իբրև «մութ ուժերի» արդյունք (Մոլորակ, 21. V. 1997): Մայիսի 1-ին տեղի ունեցած ՀԿԿ-ի հանրահավաքը ընդհանրապես չլուսաբանվեց *հեռուստալրատվամիջոցի* կողմից (Մոլորակ, 3. III. 1998) (Ա-ա-հ-Ա-հ-Ա-հ-Ա-ա) և այլն:

3. *ԲԱՐԴ ԱԾԱՆԳՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԵՆԵՐԸ* զգալի տեղ են գրավում լեզվական նորաբանությունների մեջ: Սրանց բառակազմական կաղապարները տարբեր են լինում, քանի որ ածանցները կարող են հանդես գալ բառի տարբեր մասերում: Բարդ բառերը, ածանցներ ստանալով, կարող են ունենալ խոսքիմասային տարբեր արժեքներ: Այստեղ պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Արդեն նշեցինք, որ եռաբաղադրիչ բարդությունների դեպքում անմիջական կազմիչները առաջին երկու արմատներն են, իսկ երրորդ բաղադրիչն ունենում է հիմքային արժեք, այսինքն՝ հանդես է գալիս որպես լրացյալ: Բնարկե, բարդ ածանցավոր կազմությունների մեջ վերջին բաղադրիչը հիմքային արժեք չի կարող ունենալ, քանի որ ածանց է, բայց հակադրության հիմքը նույն է: Առաջին երկու արմատները հանդես են գալիս որպես բարդ բառի անմիջական կազմիչներ և միասնաբար հակադրվում են ածանցին: Դրանց կաղապարը կլինի այսպես՝ (Ա-հ-Ա)-ա: Օրինակ՝ *վարչատարածքային, դրամահավաքություն, ընտրատարածքային, դրամաշնորհային, տարածաշրջանային, հանրահավաքային, ֆինանսավարկային* և այլն: Այս բարդությունները միայն արմատներից չեն կազմված. այդ հիմնական ձևությունների հետ հանդես են գալիս նաև բառակազմական այլ ձևություններ՝ ածանցներ:

<sup>9</sup> Ադայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, Ե., 1967, էջ 71:

4. *ՀԱՏՎԱԾՄԿԱՆ ԲԱՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ*: Վերջին տասնամյակներում բառակազմության մեջ զգալի տարածում է գտել հետևյալ երևույթը. երկու միևնույն ածանցն ունեցող բառեր, որոնք միևնույն լրացյալն ունեն, միավորվում են գծիկով (կամ առանց գծիկի), և նրանցից առաջինը կորցնում է իր ածանցը, իսկ երկրորդի ածանցը տարածվում է երկուսի վրա<sup>10</sup>: Այս հարցին առավել հանգամանորեն անդրադարձել է Էդ. Աղայանը: Նա կառուցվածքային այս տիպի վերլուծական բաղադրություններն անվանել է *հատվածական* բարդություններ, որոնք «ստացվում են նույնանուն կամ համանիշ ածանցներով կազմված ածականների համադասական կամ ստորադասական կապակցություններից՝ առաջին անդամի ածանցի կրճատումով և շաղկապի վերացումով, ինչպես՝ ռազմական և քաղաքական կամ ռազմական-քաղաքական-ռազմաքաղաքական...»<sup>11</sup>: Հատվածական բարդությունները գրվում են գծիկով (պարսկա-հայկական, վարչա-դիվանագիտական, գերմանա-ֆրանսիական, ռուս-թուրքական), միասին (բառաքերականական, գիտահետազոտական, դրամախրային, այգեգի-նեգործական):

Լեզվական նորաբանությունների կառուցվածքային տիպերի մեջ թեպետ քիչ, բայց հանդիպում ենք նաև հատվածական բարդությունների. *Քաղաքացիաիրավական, գիտակազմակերպչական\*, գիտաստեղծագործական\*, գիտատեխնոլոգիական\*, երաժշտամանկավարժական*<sup>12</sup>: Օրինակ՝ Եթե վեճը գույքային է, այսինքն՝ խոսքը *քաղաքացիաիրավական* բնույթի է, ապա քաղաքացին պետք է դիմի պատասխանող իրավապահներին (Հայկական ժամանակ, 25. XII. 2003): Ես միշտ էլ բարձր եմ գտնում Ֆ. Մարգարյանի *գիտակազմակերպչական* տաղանդը (Հայաստան, 17. IV. 1997): Այս կարգի ցուցահանդեսները, ինչպես նաև Բոստոնի գիտության թանգարանում բացված *գիտաստեղծագործական* ժառանգությանը նվիրված ցուցահանդեսները, ունեն իրենց հովանավորները (Գրական թերթ, 24. VI. 1997): Երկրորդ աշխարհամարտից հետո Գերմանիայից ներմուծած *գիտատեխնոլոգիական* ներուժն սպառել էր իր հնարավորությունները (Իրավունք, 6. XII. 1997): Մեծ առաջընթաց ունեցավ նաև *երաժշտամանկավարժական միտքը* (Եթեր, 8. V. 1997):

5. *ԱԾԱՆՑԱՎՈՐ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ*: Լեզվական նորաբանությունների կառուցվածքային տիպերի մեջ հանդիպում ենք նաև *ածանցավոր* կազմությունների, բայց *ածանցումը*, որպես բառակազմության եղանակ, բնորոշ չէ լեզվական նորակազմություններին և այնքան գործուն դեր չունի բառակազմության մեջ, որքան բարդությունը: Մեր կազմած քարտարանում ածանցավոր կազմություն ունեցող բառերի քանակը երկու տասնյակից չի անցնում: Նույն պատկերը տեսնում

<sup>10</sup> Տե՛ս Ավետիսյան Տ., նշվ. հոդվ., էջ 61:

<sup>11</sup> Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 241:

<sup>12</sup> Այս բառը, որ տեղ է գտել Ս.Էլոյանի նորաբանությունների բառարանում, կազմվել է ավելի շուտ՝ 70-ական թվականների վերջերին: Խ.Աբովյանի անվան հայկ. մանկավարժական ինստիտուտում կազմակերպվել էր նոր ֆակուլտետ այդ անվանումով: Ինստիտուտի հեռախոսագրքում (լույս է տեսել 1984 թ.) այդ բառն արդեն կար (էջ 47):

ենք Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում», որտեղ ընդգրկված ածանցավոր բառերի թիվը չի անցնում երկու հարյուրից (բառարանը պարունակում է 7000-ից ավելի բառային միավոր): Եվ եթե նկատի ունենանք, որ այդ բառարանում ընդգրկված ածանցավոր բառերի հիմնական մասը հեղինակային նորաբանություններ կամ դիպվածային բառեր են, որոնք լեզվի բառապաշարի մեջ մտնելու որևէ հեռանկար չունեն (զեփյուռի շնկոց, շողեղեն թևեր, ոճեղեն ճամփա, ձորոտ ճամփա և այլն), ապա պարզ կդառնա, որ ածանցավոր բառերը լեզվական նորաբանությունների մեջ շատ չնչին տոկոս են կազմում: Անկախ վիճակագրական այս տվյալներից՝ ասենք, որ ածանցավոր բառերի մեջ կան ն՝ նախաածանցավոր, և՛ վերջածանցավոր կազմություններ: Նախաածանցավորների մեջ զգալի դեր ունեն *զեր-*, *հակ-*, *համ-*, *այ-* ածանցները, իսկ վերջածանցների մեջ՝ *-ային*, *-ոտ*, *-ական*, *-ույթ*: *Օրինակ՝ այ* (ապաքաղաքական, ապագաղափարական), *զեր* (զերզենք, գերհրեշ, գերշահ), *հակ* (հակաքայլ, հակավճիռ, հակախոցային), *համ* (համաամերիկյան, համախորհրդային, համապիտանի), *ային* (լինգաֆոնային, հատորային, բիզնեսային, իմիջային), *ոտ* (ավիշոտ, մուժոտ, ձորոտ), *ույթ* (տեղեկույթ, արտասանույթ, եզրույթ): Այսպիսով, լեզվական նորաբանությունները կազմվում են լեզվի բառակազմական օրինաչափություններին համապատասխան, լեզվում գոյություն ունեցող կաղապարներով: Կառուցվածքային հիմնական տիպը երկարմատ բաղադրություններն են, թեպետ հանդիպում են նաև եռարմատ, հազվադեպ՝ քառարմատ բաղադրություններ: Ըստ էության, լեզվական նորաբանությունների մեջ հանդես են գալիս բառակազմական բոլոր տիպերը՝ տարբեր համամասնությամբ:

Լեզվի բառակազմական օրինաչափությունները կայուն են, բայց լեզվի զարգացման որոշակի շրջանում կարող են հանդես բերել որոշ նոր միտումներ, որոնք տարածվում են նոր բառակերտումների, այդ թվում և լեզվական նորաբանությունների վրա:

## ПРИНЦИПЫ ОБРАЗОВАНИЯ ЯЗЫКОВЫХ НЕОЛОГИЗМОВ И ИХ СТРУКТУРНЫЕ ТИПЫ

СОГОМОНЯН М. Р.

### Резюме

На данном этапе развития языка пласт неологизмов богат и разнообразен. Их изучение показывает, что они образуются путем сочетания различных частей речи. Выделяются следующие структурные типы неологизмов: 1. Двухкорневые образования. 2. Тр,хкорневые образования. 3. Сложносуффиксальные образования. 4. Сложные сочетания. 5. Суффиксальные неологизмы.